

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 23

### ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

30.10.2017թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Ադրյանը, Վ.Դոխոյանը, Հ. Մկրտչյանը, Ս.Ասրյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Մանուկյանը - մարզպետի խորհրդական

#### Օրակարգում`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին  
/Ջեկ.Ն. Սարգսյան/
2. ա/ ՀՀ Լոռու մարզի պատվիրակության Արցախի հանրապետություն կատարած այցի մասին  
բ/ մարզպետարանի ենթակառույցների ձմռան նախապատրաստական աշխատանքների մասին  
/Ա. Նալբանդյան/
3. Հոկտեմբերի 21-ին կայացած համապետական շաբաթօրյակին կատարված աշխատանքների մասին  
/Ջեկ. Հ.Թադևոսյան/
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին  
/Ջեկ. Հ.Պապոյան/
5. Վանաձոր քաղաքի փողոցների վերանորոգման աշխատանքների մասին  
/Ջեկ. Ա.Ջանազյան/
6. Նոյեմբերի 5-ին խոշորացվող համայնքներում կայանալիք նախընտրական աշխատանքների մասին  
/Ջեկ. Ժ.Ղազարյան/
7. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին  
/Ջեկ. Գ.Հակոբյան/
8. Այլ հարցեր

#### Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`  
Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ:
2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ. Խաչատրյանին`  
Քննարկել և ներկայացնել առաջարկություն Լոռու մարզի և Արցախի Հանրապետության Մարտակերտի վարչական շրջանի փոխհամագործակցության շրջանակներում աշխատանքային խումբ ստեղծելու և Մարտակերտի որևէ դպրոցում «Սմարթ» դասարան հիմնելու հարցի վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել և շրջաբերականով առաջարկել Լոռու մարզի համայնքներին, ճանապարհաշինական ձեռնարկություններին, մարզպետարանի ենթակայության կազմակերպություններին 10- օրյա ժամկետում ձմռան ջեռուցման նախապատրաստական աշխատանքները ավարտելու ուղղությամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին՝

Հետևողական աշխատանքներ իրականացնել Վանաձորի քաղաքապետարանի հետ՝ վերջինիս տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ, մասնավորապես անհրաժեշտ գույքագրում իրականացնելու, աղբահանության և այլ բնագավառների ուղղությամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Հակոբյանին՝

Մինչև նոյեմբերի 10-ը ամփոփել և ներկայացնել ճշգրիտ տեղեկատվություն մարզի համայնքների աշնանացանի և օգտագործվող վարելահողերի վերաբերյալ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ